ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2022-2024թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (փետրվար ամսվա վերջի դրությամբ)









2024թ փետրվարի 29-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 828,7 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.7%-ով, 2023թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 15.4 %-ով, իսկ 2022 թվականի փետրվարի 28-ի նկատմամբ՝ 7.4 %-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 610.5 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2023 թվականի դեկտեմբերի 31-ի նկատմամբ, 0.8%-ով, 2023թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 16.1 %-ով, իսկ 2022 թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 8.1 %-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 218.2 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.1%-ով, 2023թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ աճելով 1.2%-ով, իսկ 2022թ. փետրվարի 28-ի նկատմամբ նվազելով՝ 5,2 %-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 11 մլրդ 942.8 մլն ԱՄՆ դոլար աճելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.8%-ով, 2023թ.փետրվարի 28-ի նկատմամբ՝ 11 %-ով, իսկ 2022թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 28.1%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 11 մլրդ 403.1 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝1 %-ով, 2023 թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 11.8%-ով, իսկ 2022թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 28.9 %-ով,

6)ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 539.7 մլն. ԱՄՆ դոլար նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2 %-ով, 2023 թ փետրվարի 28-ի նկատմամբ 2.6%-ով, իսկ 2022թ. փետրվարի 28-ի նկատմամբ աճելով՝ 13.1 %-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 386.2 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.9%-ով, 2023թ. փետրվարի 28-ի նկատմամբ աճելով 5.5 %-ով, իսկ 2022թ. փետրվարի 28-ի նկատմամբ նվազելով՝ 19.8 %-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 224,4 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.8, %-ով, 2023 թ փետրվարի 28-ի նկատմամբ՝ 30.2%-ով, իսկ 2022թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 72.4%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 218.2 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.1%-ով, 2023թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ աճելով 1.2 %-ով, իսկ 2022թ.փետրվարի 28-ի նկատմամբ՝ նվազելով 5.2%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5 մլրդ 901.6 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.8 %-ով, 2023թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ աճելով՝1.6 %-ով, իսկ 2022թ.փետրվարի 28-ի նկատմամբ նվազելով՝ 4.4%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5 մլրդ 501.5 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.9 %-ով, 2023թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 25.3 %-ով, իսկ 2022թ փետրվարի 28-ի նկատմամբ՝ 105.6 %-ով,

12) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 539.7 մլն ԱՄՆ դոլար նվազելով՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2 %-ով, 2023թ. փետրվարի 28-ի նկատմամբ 2.6 %-ով, իսկ 2022թ. փետրվարի 28-ի նկատմամբ աճելով՝ 13.1 %-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2024թ. փետրվարի 29-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 433.3 մլն ԱՄՆդոլար նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 2.3 %-ով, 2023թ.-ի փետրվարի 28-ի նկատմամբ 0.6 %-ով, իսկ 2022 թ-ի փետրվարի 28-ի նկատմամբ՝ 0.1%-ով:

2024թ. փետրվարի 29-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 79.57%, ինչը ավել է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 0.42 տոկոսային կետով, 2023թ. փետրվարի 28-ի ցուցանիշից՝ 1.48 տոկոսային կետով, 2022թ. փետրվարի 28-ի ցուցանիշից՝1.83 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 20.17 %, ինչը պակաս է 2023թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 0.41 տոկոսային կետով, 2023թ. փետրվարի 28-ի համեմատությամբ՝ 1,44 տոկոսային կետով, իսկ 2022 թ, փետրվարի 28-ի համեմատությամբ՝ 1.73 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.26 %, ինչը հավասար է 2023 դեկտեմբերի 31-ի ցուցանիշին, 2023թ.փետրվարի 28-ի ցուցանիշից՝ պակաս է 0.04 տոկոսային կետով, իսկ 2022թ. փետրվարի 28-ի ցուցանիշից 0.11 տոկոսային կետով:

2024թ. փետրվարի 29-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

1) տոկոսավճարները կազմել են 20 մլրդ դրամ, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 3.44 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 4.41մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 5.58 մլրդ դրամ, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 1.16 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 1.1 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 14.42 մլրդ դրամ, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 2.28 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 3.31 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2024թ. փետրվարի 29-ին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 57.39 մլրդ դրամ, ինչը ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 26.03 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 15.84 մլրդ դրամով:

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 80.32 մլրդ դրամ, ինչը ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 38.52 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 25.18 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -22.93 մլրդ դրամ, ինչը ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ -12.49 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է -9.34 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2024թ. փետրվարի 29-ին

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 22.1 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 29.8%-ով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 132.1 %-ով,

2) արտաքին վարկերի մարման նպատակով վճարվել է 70.0 մլն դոլարի մայր գումար, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 94.8 %-ով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 97.8 %-ով,

3) ստացվել են 13.58 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 36.6 %-ով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է՝ 92.9 %-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման և մարման նպատակով վճարվել է 92.05 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2023. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 73.9 %-ով, իսկ 2022 թ, նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 105.1 %-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2024թ. փետրվարի 29-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 2 տրիլիոն 176 մլրդ դրամ, ինչը 2023 թ. դեկտեմբերի 31-ի, 2023թ. փետրվարի 28-ի և 2022թ. փետրվարի 28-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 83.1, 634.2 և 903.2 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 2868 օր, ինչը 2023թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 64 օրով, 2023թ. փետրվարի 28-ի համեմատությամբ պակաս է 233 օրով, իսկ 2022թ. փետրվարի 28-ի համեմատությամբ պակաս է 815 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2024 թ.փետրվարի 29-ի դրությամբ կազմել է 7.14 %, ինչը 2023թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.12 տոկոսային կետով 2023թ. փետրվարի 28-ի համեմատությամբ ավել է 0.7 տոկոսային կետով, իսկ 2022թ. փետրվարի 28-ի համեմատությամբ ավել է 2.35 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2024թ. փետրվարի 29-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 2.79%, ինչը պակաս է 2023թ.դեկտեմբերի 31-ի ցուցանիշից, 0.05 տոկոսային կետով՝ 2023 թ. փետրվարի 28-ի և 2022թ. փետրվարի 28-ի համեմատությամբ համապատասխանաբար մեծ է 0.01 և 1.73 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 16.63 %, ինչը 2023թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 0.64 տոկոսային կետով, 2023թ. փետրվարի 28-ի համեմատությամբ՝ մեծ է 2.69 տոկոսային կետով, իսկ 2022թ. փետրվարի 28-ի համեմատությամբ՝ 7.11 տոկոսային կետով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 80.58 %, ինչը 2023թ դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 0.59 տոկոսային կետով, 2023թ. փետրվարի 28-ի համեմատությամբ փոքր՝ 2.7 տոկոսային կետով, իսկ 2022թ. փետրվարի 28-ի համեմատությամբ՝ 8.84 տոկոսային կետով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024-2026 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2022-2024թթ. փետրվար ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2024-2026 թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 7-10 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2024թ փետրվարի 29-ի դրությամբ կազմել է 7.3 տարի: Այս ցուցանիշը 2023 թ. փետրվարի 28-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.3 տարով, իսկ 2022թ. փետրվարի 28-ի ցուցանիշից՝ 1 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2024թ. փետրվարի 29-ի դրությամբ կազմել է 11.5 %, որը 2023թ. փետրվարի 28-ի մակարդակից փոքր է 1.4 և 2022թ. փետրվարի 28-ի մակարդակներից մեծ և 2.6 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2024թ.փետրվարի 29-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 84.6 %, լողացող տոկոսադրույքով՝ 15.4%: Ընդ որում, 2024թ. փետրվարի 29-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2023թ. փետրվարի 28-ի ցուցանիշից ավել է 0.9 տոկոսային կետով, իսկ 2022թ. փետրվարի 28-ի ցուցանիշից՝ ավել է 1.5 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 40 %, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2024թ. փետրվարի 29-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 51.7 %, ներքին պարտք՝ 48.3 %: Ընդ որում, 2024 թ. փետրվարի 29-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2023թ.փետրվարի 28-ի և 2022թ. փետրվարի 28-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 5,3 և 18.1 տոկոսային կետերով: